ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

<< Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 139 26 11 2014г

<< Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում << Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 18 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թվական

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու թիվ 7 արտահերթ նիստի N1

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով՝

Ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ավագանու 2014 թվականի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1.Ն.Ասատրյան
2.Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4.Գ.Թադևոսյան
5.Վ.Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թվական

գ.Խորոնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի՝ 2013թվականի դեկտեմբերի 10-ի ավագանու թիվ 10 նիստի N5 –Ն «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի՝ 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների, ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

6. Գումար տրամադրելու մասին:

/ զեկուցող՝ Ս.Նահապետյան/

7. Սոցիալապես անապահով և նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին օգնություն հատկացնելու մասին:

Խորոնք համայնքի ղեկավար՝ / Ս.Նահապետյան /

25 նոյեմբերի 2014 թվական

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու թիվ **7** արտահերթ նիստի **N2-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ N 5-Ն « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 10 նիստի N5 –Ն « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները (համաձայն հավելվածի):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1.Ն.Ասատրյան
2.Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4. Գ.Թադևոսյան
5. Վ.Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թվական

գ.Խորոնք

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՍԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԱԿԱԳԱՄՆՈՒ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N2-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. *Եկամտային մասին փոփոխություններ*

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության N792 որոշման համաձայն՝ աշխատավարձի բարձրացման սուբվենցիա - 196.8 հազ.դրամ

Ընդամենը՝ վարչական բյուջեի եկամտային մասն ավելացնել 196.8 հազ.դրամով

2. *Ծախսային մասի փոփոխություններ.*

ա) ճանապարհաշինության 04-5-1 նախահաշվի

4251 հոդվածից պակասեցնել 300.0 հազ.դրամ

բ) ընդհանուր բնույթի 01-6-1 նախահաշվի

4239 հոդվածից պակասեցնել 400.0 հազ.դրամ

4241 հոդվածից պակասեցնել 300.0 հազ.դրամ

գ) երիտասարդական ծրագրեր 08-2-4 նախահաշվի

4239 հոդվածից պակասեցնել 200.0 հազ.դրամ

դ) ջրամատակարարման 06-3-1 նախահաշվի

4251 հոդվածից պակասեցնել 170.0 հազ.դրամ

ե) փողոցների լուսավորության 06-4-1 նախահաշվի

4251 հոդվածից պակասեցնել 200.0 հազ.դրամ

զ) ՏԻՄ 01-1-1 նախահաշվի

4215 հոդվածից պակասեցնել 100.0 հազ.դրամ

4111 հոդվածին ավելացնել 1296.8 հազ.դրամ

4237 հոդվածին ավելացնել 400.0 հազ.դրամ

4213 հոդվածին ավելացնել 170.0 հազ.դրամ

25 նոյեմբերի 2014 թվական

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու թիվ 7 արտահերթ նիստի N3 -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

Ավագանին որոշեց.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների համար դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը::

Ավագանու անդամներ՝

1.Ն.Ասատրյան
2.Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4.Գ.Թադևոսյան
5.Վ.Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ա. Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թվական

գ.Խորոնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
2014 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 7
արտահերթ նիստի N3-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քառասուն հազար դրամ:

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթանասուն հազար դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության

համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի՝ թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ քառակուսի մետրի համար :

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) բունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ:

25 նոյեմբերի 2014 թվական

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու թիվ **7** արտահերթ նիստի **N4-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Ն.Ասատրյան
2. Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
5. Գ.Թադևոսյան
6. Վ. Ամիրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

25 նոյեմբերի 2014 թվական

գ.Խորոնք

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 7
արտահերթ նիստի N4-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար 5000(հինգ հազար)դրամ.

2) համայնքի բնակիչ համարվող անձանց տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ

3) համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ.

4) համայնքի բնակիչ համարվող անձանց նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ.

5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար 1000(մեկ հազար) դրամ.

2. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել 4000 (չորս հազար) դրամ

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա.միակողմանի ծնողազուրկ երեխաների համար 50%-ի չափով՝ 2000 (երկու հազար)դրամ.

բ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար 100%-ի չափով.

գ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև 1-ին կարգի հաշմանդամների երեխաների համար 50%-ի չափով:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ Խորոնք գյուղական
համայնքի ավագանու թիվ 7
արտահերթ նիստի N5

25 նոյեմբերի 2014 թվական

ՈՐՈՇՈՒՄ

ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

Ավագանին որոշեց.

1. Հաստատել Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմի,համայնքային բյուջետային հիմնարկների ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1,2,3):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Ն.Ասատրյան
2. Ն. Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4. Գ.Թադևոսյան
5. Վ.Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թվական
գ. Խորոնք

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹՆԻՍՏԻ
N5 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 12

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

հհ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ
1	Համայնքի ղեկավար	1	220.000	220.000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160.000	160.000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	125.000	125.000
4	Աշխատակազմի քարտուղար	1	175.000	175.000
5	Առաջատար մասնագետ	1	160.000	160.000
6	1-ին կարգի մասնագետ	1	140.000	140.000
7	2-րդ կարգի մասնագետ	1	125.000	125.000
8	2-րդ կարգի մասնագետ	1	125.000	125.000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
9	Այգեպան	1	66.140	66.140
10	Հավաքարար	1	66.140	66.140
11	Վարորդ	1	115.000	115.000
12	Աղբահավաք	1	66.140	66.140
ԸՆԴԱՄԵՆԸ՝		12		1.543.420

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ԵԱՀԱՊԵՏՅԱՆ/

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
N5 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԽՈՐՈՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՉԱՓԸ

1.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ	ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՉԱՓԸ
1.	Մանկապարտեզի տնօրեն	1	92.600	92.600
2.	Հաշվապահ	0.5	90.000	45.000
3.	Դաստիարակ	2.24	92.600	207.424
4.	Դայակ	2	136.962	136.962
5.	Դաշնակահար	0.5	92.600	46.300
6.	Ռուսաց և օտար լեզուների մանկավարժ	0.5	92.600	46.300
7.	Գործավար	0.5	66.140	33.070
8.	Խոհարար	1	70.822	70.822
9.	Դռնապան	1	70.822	70.822
10.	Տնտեսվար	0.5	66.140	33.070
11.	Պահակ	2	73.200	146.400
12.	Խոհարարի օգնական	0.5	66.140	33.070
Ընդամենը՝		12.24		961.840

Խորոնք համայքի ղեկավար՝ / Ս.Նահապետյան /

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
N5 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 7

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ
1	Մշակույթի տան տնօրեն	1	73.500	73500
2	Հաշվապահ	1	70.822	70.822
3	Հավաքարար	1	66.140	66.140
4	Գրադարանի վարիչ	1	68.000	68.000
5	Պահակ	2	73.200	146.400
6	Այգեպան	1	66.140	66.140
ԸՆԴԱՄԵՆԸ		7		491.002

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ա. Նահապետյան /

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ Խորոնք համայնքի
ավագանու թիվ 7 արտահերթ նիստի N6

25 նոյեմբերի 2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝

Ավագանին որոշեց.

1. Խորոնք համայնքի բյուջեի Տեղական ինքնակառավարման մարմնի 01-1-1 նախահաշվի ծառայության մատուցում 4239 հոդվածից 100.000 (մեկ հարյուր հազար) դրամ գումար հատկացնել հանգուցյալների հիշատակին նվիրված ծաղկեպսակների համար:
2. Խորոնք համայնքի բյուջեի Տեղական ինքնակառավարման մարմնի 01-1-1 նախահաշվի ծառայության մատուցում 4239 հոդվածից 100.000 (մեկ հարյուր հազար) դրամ գումար փոխանցել դիակառքի վարորդ Սամսոն Նվերի Ավետիսյանի հաշվին՝ կատարած ծառայությունների դիմաց:
3. Խորոնք համայնքի բյուջեի փողոցների լուսավորության 06-4-1 նախահաշվի 4251 հոդվածից 200.000 (երկու հարյուր հազար) դրամ գումար տրամադրել մայրուղու երկարությամբ լուսավորության վերանորոգման և էլեկտրական անհրաժեշտ նյութերի ձեռք բերման նպատակով:
4. Խորոնք համայնքի բյուջեի ընդհանուր բնույթի 01-6-1 նախահաշվի 4251 հոդվածից 80.000 (ութսուն հազար) դրամ գումար հատկացնել փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքները կատարելու նպատակով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1.Ն.Ասատրյան
2.Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4.Գ.Թադևոսյան
5.Կ. Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան/

25 նոյեմբերի 2014 թ

գ. Խորոնք

25 նոյեմբերի 2014 թվական

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու թիվ **7** արտահերթ նիստի **N7**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշեց՝

1. Խորոնք համայնքի բյուջեի սոցիալապես անապահով հատվածից 340.000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ գումար օգնություն հատկացնել հետևյալ ընտանիքներին (համաձայն հավելվածի):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1.Ն.Ասատրյան
2.Ն.Կարապետյան
3. Է.Խաչատրյան
4.Գ.Թադևոսյան
5.Վ. Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան /

25 նոյեմբերի 2014 թվական
գ. Խորոնք

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԱԿԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N7 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵՎԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ

h/h	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*գումար*
1.	Ոսկանյան Վարվառա	40000 դրամ
2.	Ավետիսյան Աշոտ	40000 դրամ
3.	Խաչատրյան Հերմինե	40000 դրամ

Նորածնի ընտանիքներ

4.	Հայրապետյան Կարինե	30000 դրամ
5.	Մարտիրոսյան Նինա	30000 դրամ
6.	Խաչատրյան Արաքսի	30000 դրամ
7.	Կարապետյան Մերինե	30000 դրամ
8.	Թոնգուրյան Սուսաննա	30000 դրամ
9.	Կարապետյան Սաթենիկ	30000 դրամ

ԴՕՍԱՖ / ճանապարհավարձ /

10.	Ավետիսյան Հայկ	20000 դրամ
11.	Բաբայան Կառլեն	20000 դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 340.000 դրամ